

Արդարեւ մեր աչաց առջեւ ունենալով արդի հայ գաւառացի բարեկեցիկ եւ նոյն իսկ հարուստ ընտանեաց անպաճոյճ կենցաղը, երբեք ըստ բաւականի չպիտի ըմբռնէինք իսկական իմաստը Եղիշէի «փափկասուն» կամ «փափուկ» մակդրին՝ զոր կու տայ Ե դարու հայ տիկնոջ եւ ազատանուոյն առ հասարակ (174, '67), եւ որոյ նշանակութիւնը շատ ընդարձակ է: Ոչ ալ պիտի համարձակէինք ուրիշ ազգաց մէջ տիրած եւ պատմութենէն ձաղկուած բարքերը կամ բարոյական կեղտերը նշմարել մեր մէջ: Անծանօթին այս բողոն է զոր պիտի բանամ ես հոս, ուղղելով մեր աչերը դէպ ի նոր ոլորտներ:

Մեր նիւթը կարծուածէն աւելի բարդ է մասնագիտին համար: Ճաշին հետ սերտիւ կցորդուած են պարենի պահպանութեան, կերակրոց պատրաստութեան ու ճաշելու տեղերն՝ իրենց կազմածներով, որոց մէջ մտնելու ենք՝ զգալու համար նախնեաց սեղանին կարեւորութեան չափը: Մարդիկ օրուան մէջ ունէին աւելի քան մի ճաշեր, որոնք իրարու չէին նմաներ: Հարուստն ու աղքատը, աշխարհականն ու վանականը հաւասար կերպով ու չափով կերակուր չէին առնուր: Սովորականէն շատ տարբեր էին մեծահաց կոչուներն